ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/129

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15442-18 գրությամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.08.2018թ. թիվ ԴՎԱ/3216 գրության հիման վրա, 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15442-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ, որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/129 ընթացակարգի շրջանակներում 31.08.2018թ. ժամը 10:30-ին և 04.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.08.2018թ. թիվ ԴՎԱ/3216 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթում գնահատող հանձնաժողովի կողմից 8-րդ չափաբաժնի մասով Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

14.08.2018թ. Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանի էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն հրավերով սահմանված ժամկետում մասնակիցը չի ներկայացրել պահանջվող որակավորման փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/129 ընթացակարգի շրջանակներում 31.08.2018թ. ժամը 10:30-ին և 04.09.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2018/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2018/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կարտոֆիլի մատակարարման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին 14.08.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի համաձայն ապրանքի ամբողջական նկարագիրը և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15442-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.08.2018թ. թիվ ԴՎԱ/3216 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի՝

- «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-խանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն

զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կարտոֆիլի մատակարարման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը:

Մասնակիցը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հայտի թիվ 4 հավելվածով Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը հայտարարել և հավաստել է, որ ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.08.2018թ. ամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով, որին 14.08.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով սահմանված կարգով ապրանքի ամբողջական նկարագիրը և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն

օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/9» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15442-18 գրությամբ Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանին (ՀՎՀՀ՝ 25398189) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ֆ/Ա Նվարդ Սիմոնյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ